ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, գ. Արջուտ, 4-րդ փ., շենք 26, Հեռ. 093 19 91 34, arjut.lori@mta.gov.am

N ԳԱ200
19 նոյեմբեր 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ղեկավարի թիվց 84-85 որոշումները:

19.11.2018

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. `

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

12.11.2018թ. թիվ 84-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, առաջնորդվելով Արջուտ համայնքի ավագանու 12.11.2018 թվականի թիվ 39-Ն որոշմամբ՝

Որոշում եմ՝

Հաստատել Արջուտ համայնքի 2018 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի բաշխումը՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

13.11.2018թ. թիվ 85-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Լիդիյա Զոհրաբի Սարգսյանի դիմումը, հողատարածքի վարձակալության 14.02.2002թ. սեղանամատյան թիվ 52 պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման 000616 վկայականը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2393-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ, 66-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.07.2001թ. թիվ 286 որոշմամբ՝

Որոշում եմ՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արջուտ համայնքում գտնվող և Լիդիյա Զոհրաբի Սարգսյանին վարձակալության իրավունքով տրամադրված հողամասը ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2393-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին, մասնավորեցման ենթակա հողամաս է, առաջնորդվելով վերը նշված օրենքներով՝ Արջուտ համայնքի 06-019-0110-0004 ծածկագրից 0.06255 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը (Վկայական N30102018-06-0173) 71300 (յոթանասունմեկ հազար երեք հարյուր) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Լիդիյա Զոհրաբի Սարգսյանին (ծնված 24.04.1949թ):
2.Լիդիյա Զոհրաբի Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու պայմանագիր:
3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման ԱԳ կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:
4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավարի 03.10.2018 թվականի «Արջուտ համայնքի հողամասը ուղղակի վաճառքով վաճառելու մասին» թիվ 70-Ա որոշումը:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ